Հայտարարություն
ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմում փորձագետ ներգրավելու վերաբերյալ

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը ՀՀ քաղաքացիներին տեղեկացնում է մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչությունում փորձագետ ներգրավելու մասին:

Աշխատանքների համառոտ նկարագիրը. վարչության կողմից համակարգվող ոլորտում ՏԻՄ-երի մեթոդական օգնության, խորհրդատվության աշխատանքների կազմակերպում՝ իրենց սեփական, պետության պատվիրակած լիազորությունների և այլ հարցերով, սահմանված կարգով ՏԻՄ-երի որոշումներին ընթացք տալու աշխատանքներին մասնակցություն, լիազոր մարմնի կողմից հաստատված ամենամյա ծրագրի համաձայն իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքներին մասնակցություն, դրանց կազմակերպմանը օժանդակում:

Փորձագետ ներգրավելու ժամկետը՝ Պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով:

Փորձագետի պարտականությունները՝ աջակցելու է վարչության կողմից համակարգվող ոլորտում ՏԻՄ-երի մեթոդական օգնության, խորհրդատվության աշխատանքներին՝ իրենց սեփական, պետության պատվիրակած լիազորությունների և այլ հարցերով, մասնակցելու է ՏԻՄ-երի որոշումներին ընթացք տալու աշխատանքներին, լիազոր մարմնի կողմից հաստատված ամենամյա ծրագրի համաձայն աջակցելու է իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքներին, օժանդակելու է դրանց կազմակերպմանը, կատարելու է անհրաժեշտ ուսումնասիրություններ,

- ունի բարձրագույն կրթություն /առնվազն բակալավրի կրթական աստիճան/,
- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Վարձատրության չափը՝ Պայմանագրային:

Փորձագետի պաշտոնը չի կարող զբաղեցնել այն անձը, ով պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիրառելու, օրենքով սահմանված փաորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք:

Ընտրությունը կատարելու եղանակը՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները Սյունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժին (ք. Կապան, Նժդեհի 1) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակներով).

- գրավոր դիմում՝ (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
- աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
- ինքնակենսագրություն:

ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ (ք. Կապան, Նժդեհի 1, ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժին):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 17:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար քաղաքացիները կարող են զանգահարել ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ (0285) 44275 հեռախոսահամարով:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 15/05/2026թ.:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Է. Մարտիրոսյանին

քաղաքացի_____ -ից
(դիմողի անունը, ազգանունը)

_____
դիմողի հասցեն

_____
Էլեկտրոնային հասցեն

_____
հեռախոսահամարը

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կողմից հրապարակված հայտարարությանը՝ ներկայացնում եմ որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ) _____ էջ.
2. Դիպլոմի (դիպլոմների) _____ էջ.
3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի _____ էջ
4. Զինվորական գրքույկի (առկայության դեպքում) _____ էջ.
5. Այլ _____ էջ.

Առդիր՝ _____էջ.

Դիմող՝ _____ _____
ստորագրություն անուն, ազգանուն

«_____»_____ 2026թ.

Նախազգուշացված եմ՝ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին: